## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանի համայնքի հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցութային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասերի վարձակալության իրավունքի մրցույթ

| ԼՈՏ-ի անվանումը | Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ | Ծածկագիրը | Մակերեսը` քմ | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ սերվիտուտների/ առկայությունը | Ճանապարհների, առկայության մասին տվյալներ | Ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ | Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները | Հողամասի տրամադրման ժամկետը | վարձակալության իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը /սակարկվող/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լոտ 1/Վ-26/ | ք. Դիլիջան | 11-003-0501-0037 | 5070.0 | Գյուղատնտեսական նշանակության հող | վարելահող | առանց կառուցապատման իրավունքի | դաշտամիջյան ճանապարհ | առկա չեն | ըստ գործող օրենսդրության պահանջների | 25 տարի | 101 400 դրամ |

Մրցույթն անցկացվում է բաց: Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, հողամասի տրամադրման պայմաններին, գրաֆիկական նյութերին կարող են ծանոթանալ Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնում` ք.Դիլիջան, Մյասնիկյան 55, համայնքապետարանի շենք 2-րդ հարկ:
Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, անձը հաստատող փաստաթուղթ և Դիլիջանի համայնքապետարանի 900405051401 հաշվարկային հաշվին մրցույթի մասնակցության վճարի` 50000 դրամի մուծման անդորրագիր, իսկ գյուղական բնակավայրերի հողամասերի համար 35000 դրամի մուծման անդորրագիր: Մրցույթի մասնակիցները մրցույթի անցկացման օրը մուծում են նախավճար` տվյալ հողամասի տարեկան վճարի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Եթե մասնակիցը մրցույթի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է տարեկան վճարի գնի մեջ: Մրցույթում հաղթող է ճանաչվում լավագույն պայմաններ և տարեկան վճարի ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:
Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն` ՀՀ քաղաքացիները ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողօգտագործման իրավունքի այլ սուբյեկտներ:
Մրցույթի պայմանների մանրամասներին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցութային հանձնաժողովին` ք.Դիլիջան, Մյասնիկյան 55, համայնքապետարանի շենք 2-րդ հարկ:
Մրցույթը կայանալու է 2026թ. օգոստոսի 21-ին ժամը 11:00-ին, Դիլիջանի համայնքապետարանի 2-րդ հարկի նիստերի դահլիճում, հասցեն` ք. Դիլիջան, Մյասնիկյան 55:
Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին, հայտերի ընդունման վերջնաժամկետը 2026թ. օգոստոսի 17-ը, ժամը 18:00: